

# Դ Է Լ Ի - Յ Ո Վ Ա Կ Ի Մ

(Շարունակութիւն եւ վերջ)

Անտօնիօ Բօւլաթօն բոլորովին կազդուր-  
ւել էր: Բժշկի խորհրդով նա ամեն օր կատա-  
րում էր սուքով գրօսանքներ, եւ նրան միշտ ու-  
ղեկցում էր նրա քոյրը, Մատչեյլան:

Թեւ թեւի տուած նրանք անցնում էին կա-  
ֆայի նեղ փողոցներով, դուրս էին գալիս քա-  
ղաքից եւ հասնում էին լայնածառալ գաշար,  
ուր Անտօնիօն ծծում էր դով, ասողջարար օդը,  
լցւած թարմ կանաչի եւ ծաղիկների բուրմուն-  
քով:

— Ի՞նչ լաւ է այստեղ, Մատչեյլա, բնու-  
թեան այս հրաշալի վայրում. տես, տես հեռ-  
ուի սարերը՝ կարծես պատած լինեն մոյլ մա-  
նուշակագոյն քողով. արհա՛ս, որ այս երկրին  
տիրում են վայրի թաթարները:

— Օ՛, ես ատում եմ նրանց, չգիտեմ ին-  
չու, բայց ինձ թւում է, որ մի օր նրանք ...

Եւ Մատչեյլան յանկարծ կարեց խօսքը:

Նրա երեսը դարձաւ տեղոյն եւ աչքերում  
երեւաց թախիծը:

— Ի՞նչ մի օր ...

— Որ նրանք կը յարձակուեն մեզ վրայ եւ  
այն ժամանակ ...

— Թո՛ղ այդ մտայլ մտքերը, մենք այնքան  
գօրեղ ենք, որ ...

— Գիտեմ, բայց ես այդ թաթարների նեղ,  
վազվազ աչքերում, նրանց անխօս, անկենդան

դէմքերի վրայ միշտ կարդում եմ մի բան, որ  
ինձ սարսափեցնում է ...

— Այսի՞նքն:

— Մի գաւաղբութիւն, մի անապատելի  
հարւած, մի գաշոյն մեր մէջքին գիշերային  
խաւարի մէջ:

— Այո՛, նրանք ասողաներ չեն, բայց ...  
երկուսն էլ լռեցին:

Գաշար հանգչում էր արեւի փայլալոյզ,  
օրօրոյ ճառագայթների զգուանքներում:

Արտուար, սաւառներով եթերքում, երգում  
էր իւր ուրախ երգը:

Թիթեանիկները, բզկիները, մսմակները եւ  
անթիւ միջասները անխոնջ աշխատում էին ա-  
րօտի մէջ:

— Նայիր, Մատչեյլա, այստեղ եւս ետում  
է կեանքը:

Մատչեյլան մնաց լուս:

Հետուից երեւաց ձիաւորների մի խումբ.  
խուկեցին ուրախ բացազանչութիւններ, սրմ-  
լակների տըտփիւն:

Երբ խումբը իջաւ գաւաղալոյցից, Անտօնիօն  
նկատեց Մատիկտաա Մափաւելիին:

Նրա աչքերը փայլեցին ներքին կրակով:

Նա մօտեցաւ Մատիկտաային եւ համբու-  
րեց նրա ձեռքը:

— Օ՛, ի՞նչ բազդաւոր պատահար, սինե-  
սա:

— Մասշէլլա՛, Անտոնիօ՛, սրբան ուրախ եմ տեսնել ձեզ. մենք գնացել էինք Սուլթան — Սու աղբիւրը:

Եւ Մասիկատան, իջնելով ձրուց, վերցրեց էրկար շորի փէշերը եւ մի համբոյր գրուածեց Մասշէլլայի շրթներին:

— Իսկ դուք գրօնե՞ւմ էք, բժիշկը թոյլաւարե՞ց ձեզ:

— Այո՛, սինեօս:

— Փա՛ռք Մաղօննային: Ես աղօթեմ էի ձեզ համար, Անտոնիօ:

Եւ Մասիկատան ձղեց Անտոնիօի վրայ մի հայեացք, որ լի էր սիրով եւ փառաբանքով:

Սուսքը ստափ շարունակեց ճանապարհը գէղի քաղաք:

Երբ նրանք մօտեցան Կաֆայի պարսպի գլխուսը դարպասին, նրանք տեսան մի խուռն բաղմուխին, որ շրջապատել էր շուռ եկած մի մեծ սայլ լի ցորենի պարկերով:

Ամբոխը գրգռուած էր:

— Հարկաւոր է մէկ մէկ վերցնել պարկերը եւ յետոյ միայն ...

— Շատ ժամանակ կ'անցնի:

— Աւրիշ ոչինչ չի մնում. ահազին ծանրութիւն է:

Կասապանը մտախա՛ քարու՛ էր ծածրակը:

Այդ վայրկեանին դարպասի գոնեւում էրեւաց Դէլի Յովակիմը, նա մօտեցաւ ամբոխին, մի վայրկեան նայեց շուռ եկած սայլին եւ ժպտաց:

— Տեսնենք քեզ, Դէլի Յովակիմ, լուեցաւ ամբոխի միջից, մի փորձիւր վերցնել այս ջահանդամը:

Յովակիմը ծախեց կապայի լայն թևերը մինչև արմուկները եւ հասաւ, մազաւ ձեռքերով բռնեց սայլի անիւից, կացաւ, հաստքեց սյժը, բարեց մկանները եւ մի վայրկեանից ծանր բեռնաւորաւ սայլը կանգնեց անիւների գրայ:

Ամբոխը մնաց հիացած:

— Կեցցես, Դէլի Յովակիմ, դեւ ես, դեւ,

տունդ չքանդուի, ա՛յ սպայ:

Մասշէլլան, որ ախանառես էր այդ գէղփին, սրբախ ծափահարեց:

— Անտոնիօ, տես սինեօս Յովակիմը ... ինչ ո՛յժ է ...

Անտոնիօն ամբոխի միջով մօտեցաւ Յովակիմին եւ պինդ սեղմեց նրա ձեռքը:

— Դուք հերոս էք, բարեկամս, խելական հերոս:

Իսկ գէլի Յովակիմը մանկական ժպտոք երեսին նայեւ էր շուրջը. բարբափին չգոտրով, որ ինքը կատարել է մի քաջագործութիւն եւ որ ամբոխը այդ բողբին հիանում է նրանով:

Նա ահնայիչ նայեւ էր Մասշէլլայի երեսին եւ անհուն երջանկութեան ժպտոք խաշում էր նրա մտայից շրթունքներին:

Երեկոյեան մշուշը կամաց կամաց սկսել էր պատել լեռները, գաշար եւ քաղաքը:



Մերունի Թիմուսը այլապէս կանգնած էր գայրացած խանի հանդէպ:

— Ահա քո խորհուրդների հետեւանքը, քաթա՛ս ...

— Սա՛ն, սպրած կենաս:

— Թո՛ղ շողաքորթութիւնը, սպրած կենամ, երբ իմ միակ սրղին պատանդ է լատին իշխանի մօտ. ես չեմ կարող ամնիլ այդ գլխի մի անպատուութիւն, լսո՞ւմ ես, չեմ կարող:

— Ձեռնօպցի Շիրին իշխանը քո խնամին է, նա յետ կ'ուզարկէ սրղուդ. դա թիւրթմացութիւն է. նա չէ կարող պահել բանասում փեսին:

— Ձե՞ կարող, բայց արի տես, որ պահում է. քո խորհուրդը, Թիմուս, բերեց ինձ միայն անարգանք:

Մէնդլի Գիրէյ խանը վերկացաւ տախտից եւ գլխիկոր, գայրացած սկսեց ման պալ պահլիճում:

— Ես տուել էի քեզ, խան, մի սրիշ խորհուրդ եւս, դու մերժեցիր:

— Կրկին ի՞նչ. խօսիք, նկատեց խանը,

կանոց սանկրոյ Թխմուսի հանդէպ :

— Խնդրիր օգնութիւն Սուլթանից :

— Գիտե՞մ . . . բայց այդ կը նշանակէ իմ  
ունկախութեան վերջը, Թխմուս :

— Մեր գրութիւնը շատ նեղ է . հիւսիսից  
մտանում է սուսը . կարելի կը լինի վերջը  
Սուլթանի հետ պայման կապել . ուրիշ էլք  
չկայ :

Գահլիճում տիրեց ծանր սուսունքը :

Մէնզլի Գիրէյը, յենամ պատուհանին,  
տիրուր նայում էր պարակց :

Մտտերից շատերը կորցրել էին տերեւնե-  
րը եւ նրանց մերկ ճիւղերը սեւին էին տալիս  
ջինջ կապուտակում . վարդենիները այլ եւս  
չէին զարդարում վարդերով եւ սիրահարում  
սոխակը թողել էր բունը եւ հետացել :

Աչնան հասար փշուճ էր ական տեղ :

Եւ յաճկարձ խանի երեւակայութեան մէջ  
պատկերացաւ վաղեմի, հին անցեալը :

Ձինգիլի յալթական արչաւանքները, նրա  
օրերի պանծալի փառքը, Գիրէյների խաղաղ  
տիրապետութեան չրջանը :

Նա յենուեց արարական ճաշակով շինամ  
պատուհանի մարմարնեայ շրջանակին եւ տա-  
րաւ ոսկրու ա ձեռքը խորշում ա ձակատին .

— Ձենոփայինները, Հայերը, Օսմանը, նրա  
բանասարկութիւնը . . . անիծուած, անե՛լ գրու-  
թիւն . իրրեւ հայր եւ պարտական եմ դանել  
փրկութեան միջոցներ, իսկ իրրեւ խան, իրրեւ  
Մէնզլի Գիրէյների ներկայացուցիչ . . . ո՛չ, . . .  
ո՛չ :

Սաստիկ հաղեկան կոխը պաշարեց խանին :

Երկար մնաց նա լուս, բնկղմուած մուսլի  
մտածմունքների մէջ եւ վերջ ի վերջոյ գառնա-  
լով Թխմուսին, ստամների միջից դուրս  
ուուեց .

— Կանչիր գրագրիս :

Թխմուսը անձայն քայլերով դուրս եկաւ  
գահլիճից : Մէնզլի Գիրէյը տարաւ երկու ձեռ-  
քը ածխած գլխին, պինդ սեղմեց քունքերը :

— Այլա՛հ, թող լինի քո սուրբ կամքը,

դու գիտես, որն է լուս արարին, մրթմրթուճ  
էր նա իւր անդոյն, գոգացող շրթունքներով :

Գրագիրը մտաւ ներս :

— Պատրաստիր մի գրութիւն ինձանից Օս-  
մանցիների Սուլթանին, գրիր, որ ես ինդրուճ  
եմ նրանից օգնութիւն Ձենոփայինների եւ Հա-  
յերի դէմ :

Գրիր, որ ես գրա՛ փոխարէն պատրաստ եմ  
տալ Սուլթանին Կաֆա քաղաքը : Ես ստացի :  
Գնա՛ :

Գրագիրը անհետացաւ :

Մէնզլի Գիրէյ խանը թուլացած, անգորա-  
ցած մտեցաւ դախտին, բնկաւ ծնկների վրայ  
եւ գնելով գլուխը մտիթաքին սկսեց հեկեկալ  
խուլ, խոստ ձայնով .

— Օսմա՛ն, Օսմա՛ն, իմ անբազղ սրդիս,  
սպասելով քեզ, ես կորցնում եմ խանութիւնս,  
իմ պանծալի նախնիքների գահը :

\*\*

Կաֆայի նոր նշանակում ա ձեճ հիւպատոսը,  
Գեղա Գարեղան տալիս էր ստաջին պարահան-  
դէսը :

Նրա պալատի բարձր, մարմարնեայ սան-  
դուղքը զարդարուած էր գափնեկարդի, սար-  
դենիի ծառերով, եղևնիների ճիւղերով եւ ոս-  
տերով, որոնց մէջ վստած էին վեներիկի  
դոյնգոյն տպակեայ լապտերները եւ Փանտաս-  
տիկ ցոլքերով անդրադառնում էին պատերից  
կախ սուած ոսկեթեղ խայիջանների, փարչանե-  
րի, սանդուղքների մարմար ստաիճանների եւ  
դոյնգոյն զարդարանքների մէջ :

Պալատի երկրորդ յարկի մեճ գահլիճնե-  
րում խոնուել էին բազմաթիւ հրաւիրեալները :

Ներկայ էր ամբողջ Ձենոփայի եւ Հայ ազ-  
նուականութիւնը . կային եւ մի քանի թաթար  
իշխաններ :

Տախիցների եւ ջութակների մեղձ հնչիւն-  
ները լցրել էին գասաւորուած սենեակները,  
ուր պարում էին հարիւրաւոր դոյզեր :

Հիւպատոսի լայն, մեծ բնորոնարանում հաւաքուել էին ծերերը:

Այստեղ ծխում էին, խաղում էին սօմինօ, շախմատ, նարդի:

Փամանակ առ փամանակ լսում էր սօկու մետապեայ հնչիւնը:

— Լսե՞լ ես, գնդապետ, վերջին նորութիւնները, դարձաւ Գարեջանեկն աւազ պարոն Մուրադը Ազամալեկն Մեսրոպ իշխանին:

— Ո՛չ, ի՞նչ կայ որ ...

— Ասում են, Մէնգլի Գիրէյը գազանի գետապանութիւն է սպարկել Օսմանցիների վալիքանին եւ նրանից օգնութիւն է խնդրում:

— Ո՞ւմ գէ՞մ, գարմացած հարցրեց իշխան Մեսրոպը:

— Ի՞նչ հարկէ Ջենովացիների եւ մեզ գէ՞մ. Շիրին իշխանի անմիա քայլը, ստում են, ստիպել է խանին գիմել Պոլլիս:

— Հազի թէ Օսմանցիները յօժարին:

— Ինչո՞ւ կարծում եմ, որ դա մի պատե՛հ ստիթ է կլանել եւ Ղըրմը:

— Հիւպատոսը, որքան ինձ յայտնի է, գրել է Դօթին եւ նրա միջոցով խնդրել է Անգլիայի եւ Հունդարիայի թագաւորների օգնութիւնը:

— Յոյս չունիմ, որ նրանք օգնեն մեզ, Կաֆան հեռու է, շատ հեռու նրանց սահմաններից, իսկ ինքը Դօթը անցօր է:

— Հայոց բերդը եւ Ծրէնի Հիսարը կարող են գիմաղրել Օսմանցիների յարձակման:

— Եթէ պաշարեն մեզ ծովից, մեր բանրբուրդ է, բուրդ, գնդապետ:

Այդ վայրկեանին խօսակիցներին մօտեցաւ հիւպատոսի խորհրդականը, Ուրերդօ Սկարշաֆիօն:

— Սինեօններ, ինչո՞ւ այս սրբախ ժամին դուք այդպէս մտաւանջ էք:

— Ուրախանալու ոչինչ չեմ տեսնում շուրջս, կծու նկատեց աւազ պարոնը:

— O, santa Madonna, այդ ի՞նչ էք ստում, սինեօն:

— Այո, մէջ մտաւ գնդապետը, շուտով մենք հարկադրուած կը լինենք կրիս մղել Օսմանցիներին եւ Թաթարներին միացեալ ուժերի գէ՞մ:

— Ո՞վ ասաց ձեզ այդ ... նորութիւնը:

— Սանը գետապանութիւն է սպարկել Պոլլիս:

— Այդ լուրը միանգամայն անհիմն է. մեր յարաբերութիւնները Թաթարներին հետ աւելիքան լաւ են:

— Էին, մինչեւ իշխան Շիրինի վարձուցքը:

— Կարծո՞ւմ էք: Ներեցէք, սինեօններ, ես թոյնում եմ ձեզ ...

Եւ Ուրերդօ Սկարշաֆիօն թնչկատելով հեռացաւ:

— Մարսել չեմ կարող այդ թեթեւամիտ պարոնին, այդ խեղկատակին, նկատեց աւազ պարոնը, թողնելով երկար, ախպարդ բերերի տակից նարդիլէի ծուխը:

— Յիմարին մէկն է ... Կ'հ, գնամ, գտնեմ կնոջս. մեկնելու ժամ է:

Եւ երիտասարդ իշխան Մեսրոպը սեղմեց ձեռունս ձեռքը եւ հեռացաւ:

Գահիրէիցների բաց դռներից հասնում էին չուխիների եւ սաւիղների մեղմ, լացող հրնչիւնները, հիւրերի սրբախ ծիծաղը ու բացազանչութիւնները:

— Երանի՛ թէ մօտ ապագան եւս լինէր այսպէս սրբախ, մտածեց աւազ պարոնը եւ ծանր ախ քաշեց:

Կրկին մտայլ մտքերը պաշարեցին նրան. կրկին ձեռուկի աչքի առաջ անցան Անիի բնակիչների երկարատեւ շարշարանքը, կսկիծը եւ վերջ ի վերջոյ բողբոսնը կեցութիւնը Ղըրմում:

— Եթէ Տաճիկը յաղթէ, ի՞նչ կը լինի Հայերիս հալը. կրկին անարդ ստիպութիւն, կրկին պանդխտութիւն, կրկին գաղթ. միթէ՞ այդ է Հայերիս ճակատագիրը. ինչո՞ւ նա անպարմքում է մեզ տեղից տեղ, երկրից երկիր եւ ցիր

ու ցան անում աշխարհիս շորս կողմը . ո՞ր  
մեղքերիս համար . . .

Եւ ձերուկը տարաւ ձեռքը ձակատին,  
արօրեց եւ նայեց շուրջը :

Նրան խորթ, գրուելի թուացին այդ պրծ-  
նումս, որախոցոց սմբսիբ, այդ շքեց դահ-  
լիճները իրենց փառ լուսաւորութիւնով, թան-  
կագին փարագոյրներով, խալիճաներով : Տա-  
ւիղների եւ ջու թակների մեղեցին կորատում  
էր նրա սիրտը :

Նա ծանր փերկացաւ, իջաւ պայտառի սան-  
դուղքներով եւ գուրս եկաւ փողոց :

Ձով քամին փչեց նրա երեսին :  
Երկնակամարը ծածկում էր սեւ, արձա-  
յին սմպերով :

Ոչ մի տառց չէր պլպլում այնտեղ, մտայ  
բարձրութեան մէջ :

Միայն Կաֆայի փարսառի լույսը կարմիր  
չերտով բնկել էր ծովի ալեկոծ մակերեսովին  
եւ անդադար երեքում էր ալիքների վրայ :

— Կարձես արխն լինի, անցաւ ձերուկի  
մտքով :

(Մնացեալը յաջորդով)

ԳԷՈՐԳ ԶՈՒՅԱՐ